

առջև, գաղղիացի Ռաֆրէյ խուզարկուն իր ճամբորդութեանց պատմութիւնն ընթերցաւ, զոր նոյն կղզւոյն հիւսիսային կողմն ըրած է, և մասնաւորապէս իր նպատակն եղած է զԺողովարդը քննել, Պ. Ս. Ֆիւշ Պետլինութանդարանի վարժապետն՝ ճամբայ ելաւ Ասիոյ և Աւստրալիոյ հարաւային արևելեան կողմը մանրախոյզ ճամբորդութիւն ընելու վախճանաւ. այսպիսի քաջ խուզարկութենէ մը շատ գիւտեր կրնանք յուսալ:

Հիւսիսային Ամերիկայի մէջ եղած Գանատայի և Միացեալ Նահանգաց խուզարկու ընկերութիւնքն շարունակ աշխատած են. Պ. Օպեր հետազօտեց, դլխաւորաբար իբրև ընագէտ, քանի մը արևմտեան Հնդկաստանի կղզիներ. Գրեվիյ ամենակարևոր քննութիւններ ըրած է անգղիական կույանայի ներքին մասանց վրայ, որ գրեթէ անծանօթ էին, մինչդեռ երկու ամերիկեան արշաւանք առ Ամազոնս և ի Մատերա գացեր են. և այս վերջին արշաւանաց նպատակն է իմանալ թէ Մատերա կրնայ արդեօք ծովային վաճառական ճամբայ դառնալ: Մորենոյի հարաւային Բազակոնիայի վրայ ըրած հետազօտութեան պատմութիւնը մեծապէս օգտակար եղաւ այն երկրին աշխար-

հագրական տախտակաց մէջ պարապ թողուցած տեղերը լեցնելու համար: Պրագիլի վարչութիւնն մեծ յառաջադիմութիւն ըրաւ, իր դլխաւոր քաղաքաց երկայնութեան աստիճանները գտնելով: Իսկ անցեալ տարւոյն աշխարհագրական դիպաց մէջ ամենէն երևելին է այն ընկերութիւնն՝ որ անցք մը պիտի բանան ընդ մէջ Նիքարակուայ:

Վերջապէս թէպէտ և անցեալ տարւոյն մէջ ամենամեծ գործեր չկատարուեցան, սակայն մեծ և յարատև յառաջադիմութիւն եղաւ առ ի ստացումն ճիշդ և կատարեալ ծանօթութեանց երկրիս մակերևութին նկատմամբ: Ճանապարհորդութեանց դրականութիւնը, ըստ սովորութեան, անցեալ տարւոյն մէջ ամենաշատ եղաւ: Ընդհանուր աշխարհագրութեան նկատմամբ նշանաւոր են Ռըքլիւին Ընդհանուր աշխարհագրութեան երրորդ և չորրորդ հատորներն, և Սդանֆորդի Համալսարանի աշխարհագրութեան երկու առաջին հատորներն: Անթիւ են Տաճկաստանի և Աֆլանտանի աշխարհացոյց տախտակներն, որ անցեալ տարւոյն մէջ ելցան: Կոթացի Բեդբեմանի մահն ամենամեծ կորուստ է հետազօտութեան և ուսումնական աշխարհագրութեան նկատմամբ:

Մ Ա Ն Դ Ա Յ Ֆ Է Լ

Չօրավարն պարոն Էտլինոս Յովհաննէս կարողոս Մանդայֆէլ ծնաւ ՚ի 24 փետրուար 1809 Տրեգտայի մէջ: Որդի Յովհաննէս կարողոս պարոնի, մարդու մը՝ որու յանձնուած էր մեծամեծ գործեր նախ ՚ի Սաքսոնիա և ապա ՚ի Բրուսիա, ինքն իրեն Ոթոն Թէոդորոս և կարողոս Թէոդորոս երկու հօրեղբորդեաց ՚ի մանկութեան որբ մնացելոց հետ մէկտեղ դաստիարակուեցաւ, որոնցմէ առաջինը բրուսական խորհրդ-

դարանին նախագահ եղաւ, իր ընդդիմագործական (réactionnaire) քաղաքագիտութեամբն անուն հանելով, և միւսն ևս ունեցաւ պաշտօնական կարևոր յանձնարարութիւն մը:

Էտլինոս պարոնն ստորին տեղակալի աստիճանաւ բրուսական Պահապան զինուորաց վիշապագնդին մէջ մտաւ (1828), և փութով նշանաւոր եղաւ իր այն մեծ սիրովն որով զինուորական դիտութեանց ուսման միտ կը դնէր, ո-

րոնց՝ իրեն միայն պարտքէն պահանջա-
 ծէն շատ աւելի ետեւ կ'ըլլար : Յետոյ
 յաճախեց պատերազմական վարժա-
 րանը , և թէպէտ դեռ միայն ստորին
 տեղակալի աստիճանն ունէր , անուա-
 նուեցաւ 1837ին աջակից գնդի , և յե-
 տոյ աջակից Միւֆֆիլինի զորավարին ,
 որ այն ատեն Պետլինի վարչին տեղը կը
 գրաւէր , և որուն անունը հռչակաւոր
 էր՝ 1827ին Ագրիանուպոլսոյ հայտու-
 թեան մէջ իբրև միջնորդի մասն ունե-
 նալուն համար : Միւֆֆիլինի զորավարին
 գալոցին մէջ ասպտամբող ժողովարոց
 ղէմ'անողքելի խտուրթեան սկզբունքը
 ստացաւ , հանդերձ քաղաքապետական
 յաջողակութեամբ որ խոսովութիւննե-
 րը նուաճող զորավարաց կ'օգնէ , իրենց
 յաղթութիւնը լրացընելու համար :

Յամին 1848 Մանդայֆէլ մեծ գործօ-
 նէութիւն մը ցուցուց պահպանել (con-
 servateur) աղմկեալ տարերքը միացը-
 նելու համար և անով ղէմ' դնել տա-
 լու հետզհետէ զօրացած յեղափոխու-
 թեան , և այն ժամանակ Գ ֆրեզերիկոս
 Գուլիէլմոս զինքը գործածեց այլ և այլ
 քաղաքադիտական մեծ մատչութեան
 արժանի առաքելութեանց մէջ , զորս
 գիտցաւ կատարել կարողութեամբ և
 յաջողակութեամբ : Ընդդէմ՝ ազատա-
 կանաց պատերազմական գործոց մէջ
 մասն ունեցաւ , և իր ծառայութեանց
 'ի վարձ՝ թագաւորը զինքը բարձրա-
 ցուց , 1848 դեռ չլինցած , հազարապե-
 տի աստիճանին : Յամին 1853 անուա-
 նեցաւ տեղապահ գնդապետի և հրա-
 մանատար Ե նիզակաւոր հեծելազնդին :
 Այլ իշխանը շուտ մը զինքը իր քով
 կոչելով , մեծագոյն մատչութեամբ
 գանձիկայ պատուեց . դեռ երիտասարդ
 սպայ ըլլալով շատ անգամ լրագրական
 տեղեկութիւնները թագաւորին կու-
 տար , որ ընդհանրապէս կերպս զօ-
 րավարէն իրեն կը հասնէին . և բաց աս-
 կէ , Շոլլըր զօրավարին ներկայացուցիչ
 անուանեցաւ ֆրեզերիկոս Գուլիէլմոսի
 զինուորական խորհրդարանին վարչու-
 թեան մէջ , պաշտօն՝ որուն զլուխ ե-
 ղաւ 1857ին :

Ձինուորական խորհրդարանը բոլոր
 զօրաց իրաց վրոյ բացարձակ իշխա-
 նութիւն մը կը բանեցընէր . ուստի Ման-
 դայֆէլ մեծամեծ նորաձեւութիւնները
 կատարելու միճակի մէջ գտնուեցաւ , զոր
 իր ուսումներն իրեն թելադրեր էին :

Իր խորհրդօվն եղաւ որ աւագութիւնը
 յառաջդրութեանց հին զրութիւնը
 խափանուեցաւ , և բանակէն բանի չե-
 կողները մերժուեցան , երիտասարդ ըս-
 պայից տեղ տալու համար , որոնք այս
 կերպով կրցան բարձրանալ մինչև այն
 ատեն չտեսնուած արագութեամբ մը
 զինուորական դասակարգութեան աս-
 տիճանաց : Այս նորութեան գործը , կար-
 դադրութեան անկիւնակալ քարը կրնայ
 համարուել , որուն ձեռքով Բրուսիոյ
 զինուորական զօրութիւնը հրաշք գոր-
 ծեց , որոնց 1866ին և 1870ին մէջ բովան-
 դակ աշխարհ հիացած վկայ եղաւ :

Մանդայֆէլ վերոյիշեալ պաշտաման
 մէջ մնաց մինչև ց 1865 . և սակայն Գու-
 լիէլմոսի բրուսական գահը ելլելէն շատ
 ժամանակ վերջը , որ յետոյ ինքնակալ
 Գերմանիոյ եղաւ : Բայց ինքը հետզհե-
 աէ բարձրագոյն ևս աստիճաններով
 յառաջեր էր , մինչև որ 1861ին ընդ-
 հանուր տեղակալ անուանեցաւ :

Վերջնալով պատերազմը մէկ կող-
 մէն Տանիմարգայի հետ , և միւս կող-
 մէն Աւստրիոյ և Բրուսիոյ դաշնակցաց ,
 և հաստատուելով խաղաղութիւնը որով
 Շէլզֆիկ-Հօլլշայնն երկու յաղթական
 Տէրութեանց կը մնար , Մանդայֆէլին
 յանձնուեցաւ 1865ին զբութեան մէջ
 մնացած գնդից հրամանատարութիւ-
 նը : Ծանօթ է որ 'ի եպոզէյն հաստա-
 տուած դաշինքով , առնուած երկրին
 զինուորական բաժանում մ'եղաւ : Այս
 պէս երկու Տէրութեանց իւրաքան-
 չիւրը պահեց Շէլզֆիկի վրայ ինչպէս
 Հօլլշայնի վրոյ՝ տիրակցութեան իրա-
 ւունք մը , բայց հաստատուեցաւ որ աւս-
 տրիական գունդերն այն գաւառներէն
 երկրորդը միայն գրաւեն , և բրուսական
 գունդերն առաջինը : Մանդայֆէլ ընդ-
 հանուր վարիչ անուանեցաւ Շէլզֆիկի :
 Ամենադժուարին պաշտօն մ'էր կըր-

կին պատճառայ համար : Ժողովուրդը բրուսական իշխանութեանը կը հակառակէր , և ակն յայտնի կը ցուցնէր իր միտումն առ զուրան Աւստրիացիները , որուն կ'իյնար երկրին վրայ ժառանգական իրաւունքներն ունենալը : Այլ վարչին անողգրելի խտութիւնն այնքան ճանչցուած էր՝ որ ապստամբողական շարժմանց նշան մ'ալ չեղաւ : Մեծազոյն դժուարութիւններ կը ծագէին այն հակառակութենէն՝ զոր կ'ընէր Աւստրիա տիրակցութեան զօրութեամբն այն ամենայն օրական գործոց որ կը ցուցնէին թէ որոշուած է 'ի Պերլին միացընել Բրուսիոյ հետ ոչ միայն զՇէզզվիկ այլ և զՀոլզայն :

Արդէն իսկ յայտնի էր որ դքսութեանց խնդիրը , յորում քիչ մը ժամանակ կարճուեցաւ թէ Աւստրիա և Բրուսիա հաշտութեան տեղի մը գտեր են , ընդ հակառակն երկու Տէրութեանց մէջ աշխարհային մրցութեան կիրքը յագեցընելու պատրուակի պիտի ծառայէր : Երբոր ընդդէմ Աւստրիոյ իտալ — բրուսական դաշնակցութիւնը ձեւացաւ , ծագեցաւ 1866ին պատերազմը :

Իր զօրութիւնը լաւագոյն կերպով ամփոփելու համար , վեննայի վարչութիւնը պատուէր տուեր էր նապէնձ գորավարին՝ որ Հոլզայնի աւստրիական զնդից կը հրամայէր , երթալու միանալու մեծ գլխաւոր բանակին հետ , և այսպէս Բրուսացիք այն դքսութիւնն ալ գրաւեցին : Այս ըլլալէն վերջը , Ման դայֆէլ պատերազմի տեղը կ'երթար գնդի մը հրամանատարութիւնն առնելու :

Այս գնդին յանձնուեցաւ Աննովէր մանալու գործն , արդիւնքը համար որ այն թագաւորութեւ գունդերը չմիանան Աւստրիոյ դաշնակից ուրիշ Գերմանացւոց հետ : Լանկենսալձայի պատերազմին մէջ (27 յունիս 1866) Աննովէրի Գէորգ թագաւորը բարորոյն յաղթուեցաւ և ստիպուեցաւ անձնատուր ըլլալ իրեն ամենայն զօրութեամբքը :

Մենոյի բանակին գլուխ գրուելով , Մանդայֆէլ յառաջնց մինչև 'ի Ֆրանկ-

ֆորդ , և տիրելով այս քաղաքին , որ մեծապէս թշնամի էր Բրուսիոյ , անլուր խտութեամբ հետը վարուեցաւ . 25 միլիոն դալլերի պատերազմի հարկ դրաւ վրան (գրեթէ 94 միլիոն Ֆրանք) , և այնպէս սարսափելի եղան իր հրդեհի և աւարառութեան սպառնալիքը՝ թէ որ ահագին գումարն անմիջապէս չհատուցուէր , որ եղկելի քաղաքապետն յուսահատեցաւ և ինքզինքը սպաննեց :

Փրանկ-բրուսական պատերազմին մէջ , Մանդայֆէլ՝ որ բանակին տաղմին գնդին կը հրամայէր , Մէջի չորս կողմի Գերմանացւոց ըրած յաղթութեանց ձեռնտու եղաւ , և յետոյ մասնակից այլ և այլ գործողութեանց , ի սկիզբն 1871, այն ատեն երբոր զինադադարումն ըլլալու մտա էր , զրկուեցաւ Պուրպաքիի դէմ , որ Գաղղիոյ արևելեան կողմը զօրաց գունդ մը ժողովեր էր , և Ժիւլ Ֆաւրը մտացած ըլլալով այն գունդն ալ զինադադարման մէջ հասկըցընելու , Ման դայֆէլ շարունակեց թշնամութիւնն և բռնագատեց Պուրպաքիի զօրքերն որ ապաստանին 'ի Զուիցերի , մինչդեռ իրենց զրկման անձնասպանութեան փորձ կը փորձէր :

Երբոր խաղաղութիւնը կնքուեցաւ , Մանդայֆէլ զբաւոյ գնդին հրամանատարութիւնն ունեցաւ , որ մնաց 'ի Գաղղիա մինչև որ պատերազմի հարկը վճարուեցաւ :

Այս ամեն բանէն , ինչպէս կը տեսնուի , մարդն որ հիմայ Ալսաս-Լոռէնի գլուխ գրուեցաւ , միշտ այնպիսի պաշտօններ ունեցաւ որ անաւաւն հաւատարմութիւն մ'է այս՝ որուն իր վարչութեան տակ դրուած ժողովուրդք շատ գոհ պիտի չըլլան : Մանդայֆէլ մարալախտը , — մարալախտի պատիւը պատերազմէն վերջը ընդունեցաւ , — անտարակոյս պիտի ջանայ երկրին բարիք ընելու : Բայց վայ այն աշատնեւորուն որ ցուցընեն , նաև միայն խօսքով մը , վերստին գաղղիացի ըլլալու փափագը :